Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
նոյեմբերի 5 -ի N 685 - Ա
որոշման

«ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ՔՈՎԻԴ-19 ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը	Նպաստել Կորոնավիրուսային համավարակին արձագանքելու ջանքերին՝ անհատական պաշտպանիչ միջոցների տրամադրման միջոցով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Կարմիր խաչի և կարմիր մահիկի միջազգային ֆեդերացիա
4.	Ծրագրի կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության բոլոր մարզեր և Երևան, սոցիալ-առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	149,761,040 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ բնակչության խոցելի խմբեր, ՀԿԽԸ կամավորներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	12.11.2020 թ. - 31. 12. 2020 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,ահրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	ՀՀ բնակչության խոցելի խմբերի և Կորոնավիրուսային համավարակի արձագանքման մեջ ներգրավված կամավորների համար անհատական պաշտպանիչ միջոցների ձեռք բերում և տրամադրում: Նշված գործողություններն իրականացնելու համար պլանավորվում է ծախսել ընդհանուր առմամբ 149,761,040 դրամ:

10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևանի և ՀՀ մարզերի խոցելի խմբերի ներկայացուցիչների համար անհատական պաշտպանիչ միջոցների ձեռքբերում, այդ թվում՝ դիմակների՝ ընդհանուր 31,800,000 դրամի չափով, ձեռնոցների՝ 6,996,000 դրամ արժողությամբ, ալկոգելի՝ 7,748,600 դրամ արժողությամբ, անհպում ջերմաչափի՝ 1,372,700 դրամ արժողությամբ և առաջին օգնության արկղիկների ձեռքբերում՝ 93,253,500 դրամի չափով: Նախատեսվում է նաև բեռնատար մեքենաների վարձակալության, բեռնափոխադրման ծառայությունների և վառելիքի ձեռքբերում՝ ընդհանուր 8,590,240 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Առողջապահության նախարարության և ՏԻՄ-երի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ Կարմիր խաչի միջազգային ֆեդերացիային: Աշխատանքների ընթացքը ենթարկվելու է մշտական հսկողության ՀԿԽԸ կողմից: ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ